

փախուցեալ էին յերեսաց ասպատակաց յայլեւայլ աշխարհս, լուեալ զանգորութենէ աշխարհին՝ դարձան յետս ի հայս. եւ վայելչացուցին զվանորայնս, զորս աղարտեալ էին հէնք. ոմանք եւս նորոգ շինեցին զայլ մեծամեծ մենաստանս» (Պատմ. Հայոց, Բ., էջ 823) :

Գաղիկ թագաւորի կենդանութեան այս օրերուն հաւանական կրնայ համարուել, որ Մլքէ շինած ըլլայ Ս. Աստուածածինը եւ գրել տալով աւետարան մը նուիրած ըլլայ զայն: Նուիրման թուականն ալ, որ երկրորդ յիշատակագրին մէջ ՇԺԵ թուին տակ գրուած է, մեր խնդրին դժուարութիւն չի կրնար յարուցանել, որովհետեւ այդ թուականը ինքնին շատ խնդրական է: 1902ի «Չարդանկարք աւետարանին Մլքէ թագուհոյն» գործին մէջ գրուած է անոր մասին՝ «Ի՞նչ թուականը քերթուած է եւ տգէտի ձեռքով գրուած ՇԺԵ (1066) սեւ եւ նոր թանաքով, սակայն նախորդ թուականի մնացեալ հետքէն կրնանք ճշդել զայն. առաջին գիրը, տարակոյս չկայ թէ Յ պիտի ըլլայ. երկրորդ գիրը Կ է ինչպէս կը տեսնուի, իսկ երրորդը աւելի Ա.ի մօտ է եւ կ'ըլլայ ՅԿԱ.—912» (էջ 8, ծանօթ. 2) :

Մխիթարեան Հայրերը սակայն շատ տարածայն են այդ թուին շուրջ եւ իրաւացիօրէն, որովհետեւ ան դժուարինթեոնի է՝ քերուած, ինչպէս նաեւ նոր թուականով ծածկուած ըլլալուն համար:

բ) Ըսենք թէ ինչո՞ւ Բ եւ Ե՝ ՅԾԱ.ի սրբազրութեան կը նպաստեն:

Հաւանական է որ Բ եւ Ե՝ բշ. եւ եշ. նշանակեն եւ ոչ թէ ժամ:

ՅԾԱ.ին անոնք երկուշարթի՞ եւ հինգշարթի չէին զար, մինչ ՅԶԱ.ին՝ այո՞՞:

Կը հետեւի թէ անոնք ՅԶԱ.ի՞ իբր գրութեան թուականի, աւելի կը նպաստեն քան ՅԾԱ.ին:

Բ եւ Ե հաւանօրէն բշ. եւ եշ. կը նշանակեն, նախ՝ որովհետեւ կարծենք շատ ուղիղ պիտի չըլլայ հաստատել թէ գրիչը մինչ այրուբենի տառերով ժամ ուղած է նշանակել, ակամայ նշանակած է ճիշդ այդ այրուբեններուն համապատասխանող եօթնեակի օրեր՝ որոնք երկու հեռուոր ամսաթիւերու՝ Արաց ԻԼ.ին եւ Արեգ Զ.ին, ստուգիւ իրենց նշանակած օրերուն հանդիպէին: Բայց կայ

<sup>3</sup> ՅԾԱ Հրոտից 165ն մինչեւ ՅԶԱ Հրոտից 16 կայ 1564 եօթնեակ + 2 օր. ըստ այսմ վերջինս կու գայ բշ. այս օրէս ետ երթալով Արեգ 6ին — 4 տարբերակով — կը գտնենք եշ. եւ սպա Արաց 28՝ բշ.:

աւելին. ի՞նչպէս կարելի է բացատրել — ընդունելով որ գրիչը Բ եւ Ե գրած ժամանակ չէ ուղած մատնանշել օր — այն հարկադրական կատր, որ կայ Բ.ի եւ Ե.ի միջեւ: Ամէն անգամ երբ առաջինը երկուշարթի է, երկրորդը միայն հինգշարթի կրնայ ըլլալ. ամէն անգամ որ Արացի Բ.ը՝ երկուշարթի է, ոչ մէկ թուականի Արեգի Ե.ը բացի հինգշարթիէն՝ կրնայ եօթնեակի մնացեալ օրերէն մին նշանակել: Լոկ պատահարով մեկնել կամ պատահարի վերադրել այս՝ կարծենք քիչ մը շատ է:-

Կայ բայց դեռ շատ աւելին. Հ. Հացունի կը գրէ «հին գրչաց քով անսովոր է օրերուն անուանքը նշանակել այրուբենի գրերով, որոնք իբրեւ թուանշան կը գործածուին ընդհանրապէս. եւ երկրորդ՝ ուրիշ շատ գրիչներ եւս սովորութիւն ունէին յիշելու ժամերը, եւ անոնց կարգին Մաշտոցի նոյն աշակերտն ալ, որ իւր գրութեան աւարտը կը գնէ «ի վեցերորդ ժամու»,»:

Թէ հին գրիչները սովոր էին լոկ այրուբենի գրերով օրերու անունները նշանակել յայտնի կը տեսնուի հնագրեան ձեռագիր աւետարաններէն, որոնց լուսանցքին վրայ գտնուած Ա., Բ., Գ... է, գրերը կը մատնանշեն կտորներ որոնք պէտք էին կարգացուիլ իրենց նշանակած օրերուն, այդ է՝ կիրակի, երկուշարթի, երեքշարթի եւն. շարթ: Երկրորդ, արդեօք այդ «ուրիշ շատ գրիչներ» որոնք սովորութիւն ունէին յիշելու ժամերը, լոկ այրուբենի գրերով՝ կը նշանակէին զանոնք. անշուշտ ո՛չ — ինչպէս քերուած օրինակէն կ'երեւայ «ի վեցերորդ ժամու» — իսկ քանի ոչ, անտեղի է այս սովորութիւնը, հին գրիչներու լոկ այրուբենի գրերով՝ օրերու անունները նշանակելու «չունեցած» սովորութեան հակադրել: Երրորդ, եթէ ճիշդ է թէ «շատ գրիչներ» սովորութիւն ունէին յիշելու ժամերը, — ո՛չ լոկ այրուբենի գրերով —, ստուգիւ շատ աւելի ճիշդ է ըսել թէ անհամեմատօրէն շատ աւելի գրիչներ սովոր էին յիշել օրերը, եւ անոնց կարգին Մաշտոցի նոյն աշակերտն ալ, որ իր յիշատակարանին մէջ «ի վեցերորդ ժամուն» գրելէ առաջ «ի մեծի հինգշարթի» կը գրէ:

Մեր քննած հինգ հազար յիշատակագրութիւնները հետեւեալ արդիւնքը տուին:

Քիչ են ընդհանրապէս օր յիշող գրիչները, գրեթէ ոչինչ է սակայն անոնց թիւը՝

որոնք ժամ ալ կը նշանակեն<sup>4</sup>: Չափազանց ցանցատ դէպքերու, եւ այն՝ ժէ—ժԼ դարու մէջ գրուած դտանք ժամ՝ առանց կանխապէս օր նշանակած ըլլալու:

Օրերը կը մատնանշուին կա՛մ իրենց անունով, կամ օրերու համապատասխանող այրուբեններու քով «շարթի», վերջին դարերուս նաեւ «չ» աւելցնելով (շարթ եւ կիրակի այս ձեւով բնաւ չգտանք. ուրրաթ = զ շարթի՝ քիչ անգամ): Ժամերն ալ նման կերպով: Երրորդ, վեցերորդ եւ իններորդ ժամերն են որ ընդհանրապէս կը յիշատակուին:

5000 յիշատակագրութիւններու այս արդիւնքը տեսնել վերջ՝ աներկայ կարելի է ընդունել, թէ խնդրոյ նիւթ յիշատակագրութեան մէջ եւս գրիչը՝ Բ եւ Ե տառերով՝ լակոնական ոճով — աւետարաններու լուսանցագրութիւններու ոճով — օր նշանակել ուղած է: Հին մատենագիրը ամսաթուերու քով անդրադոյն բան մը նշանակել ուղած միջոցին, ուղած է եօթնեակի օր նշանակել:

Լակոնական յիշատակարանին Բ. եւ Ե.ը պահանջք մ'ունին, այդ է՝ այնպիսի բուականի մը գրուած ընդունելու է Մլքէի աւետարանը, որուն մէջ Արաց 28 եւ Արեգ 6 ստուգիւ երկուշարթի եւ հինգշարթի ըլլալու են:

\* \* \*

<sup>4</sup> Ընդ մէկը շուրջ 200 յիշատակարան կը յիշեն տարթիւնք եւ ամսաթիւնք զատ նաեւ օր, իսկ միայն տասնեակ մը յիշատակարան օրէն զատ նաեւ ժամ: Չեռագրներու ցուցակներէն քաղելով կը գտնենք հոս հին դարերու սակաւաթիւ օրինակներէն:

- ՊԻԹ Օգ. ժե շորեք. (Սարգսեան, Յուց. Ձեռ. Թ. 298):
- ՉՉՉ Հոտի Ին շորեք. (Տաշեան, Յուց. Ձեռ. Մխիթ. Ի Վիեննա, էջ 75):
- ՉՉԵ Դեկտ. ԻԹ կիրակի (Լալայեան, Յուց. Ձեռ. Վասպուրականի, Ա., էջ 184):
- ՉԿԹ Յունիս Զ զարթի (Tisserant, Cod. Arm. Bybl. Vaticanae, էջ 353):
- ՉԿԼ Յունիս Ա ուրրաթ (Տաշեան, Յուց. Ձեռ. Մխիթ. Ի Վիեննա, էջ 885):
- ՉԾԲ Արաց ԻԳ շարթ (Լալայեան, Յուց. Ձեռ. Վասպ., Ա., էջ 63):
- ՉԾԱ Փետ. ԺԱ կիրակի (Tisserant, Cod. Arm. Bybl. Vaticanae, էջ 352):
- ՉԾ Սեպտ. Է եշար. (Tisserant, Cod. Arm. Bybl. Vaticanae, էջ 352):
- ՉԾԼ Մարտ ԻԵ գշ. (Tisserant, Cod. Arm. Bybl. Vaticanae, էջ 352):
- ՉԻ շորեք. (Սարգսեան, Յուց. Ձեռ. Թ. 212):
- ՈՂԹ Օգ. ԻԵ կիրակի (Միրսէեան, Յուց. Ձեռ. Հալեպի Ա. Քառասուն եւն. Ա., էջ 353):
- ՈՃԳ Օգ. ԺԳ շորեք. (Արաց 1888, էջ 48):
- ՅԻԳ Չոտի Զ հինգ. (Թովմ. Արժրուհի, Պատմ., էջ 217. Գուհասեան Թիֆլիս):

Եղրակացնելով՝ Բաղձավայրի հաշիւներն, որոնք Հ. Հացունիի հետեւութեան մեծադոյն փաստերն են, սրբազրուած կը մնան: Գալով ՅԶԱ.ին, որուն կողմն են թէ՛ պատմութիւնը — աւելի քան ՅԾԱ.ին — թէ՛ մատնանշող լակոնական յիշատակարանի մանր մասերը եւ հնագրութիւնը — շատ աւելի քան ՅԾԱ.ին — կ'առաջարկենք իբր Մլքէի աւետարանին գրութեան ստոյգ թուականը համարել, քանի այս սրբազրութեան կը նպաստեն նաեւ խնդրոյ նիւթ կողմ Ծան՝ որ իրականին որոշ տեսանելի չէ եւ 1911ի Բղձ.ի վկայութիւնը թէ՛ «աղոր (անորոշ Ծ.ի) ստորին մասը կը նմանի Բիշոյ Զ.ին. պոչը ձախէն յաջ կ'իջնէ, եւ կը վերջանայ տողին վրայ»:

\* \* \*

ՅՈՒՆՈՒԱՐ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՑ Ի ԲՈՒԼՊԵՐԵՐԸ  
(Շարունակութիւն):

35.

ՄԱՇՏՈՑ

Ի ՊԼՈՎԴԻԻ

Թուրքիոյ՝ 207: — Մեծնիսիոյ՝ 21 × 16: — Գրութիւն՝ երկսիւն, 18 × 11 եւ 19 × 13՝ խառն: Երբին լուսանցք 1 × 1½ սմ.: — ՏՈՎ.Բ՝ 20: — Նիւթ՝ բուրբ հաստ եւ ոգորկ, դեղնադեղն: — ԿԱՁՄ՝ կաշեպատ-փայտեայ, արեւիյեան, ամուր: Առաջին կողմին վրայ 13 սմ. դրամագծով արծաթեայ շքանակի մէջ առնուած է խաչ մը, կարմիր ու կապոյտ քարէ չարս բեւեռներով, մէջտեղը՝ փոքրադիր խաչկալութիւն: Փակամէքն ինկած: Կազմին ներք՝ սպիտակ բուրբ, քան զայց մը յաւելուածակամ սպիտակ բարբը՝ սկիզբն ու վերջը: — ՄԱԳԱՎԱԹԵԱՅ ՊԱՇԱՊԱՆԿ՝ չունի: — ՀԱՆԳԱՄԱՆԻՆ՝ ոչ այնքան լաւ: Սկիզբն կը պակսի քանի մը բարբը, հաւանաբար եւ յիշատակարանը՝ վերջէն: Գործածութեան հետեւեալ մասում են բարբերու ստորին անկիւնները՝ մինչեւ բգ. 20: Կան նաեւ խոնարհեմ եւ ցեցակիրութեմ վեցասուած բարբեր: Վերակազմութեան ընթացքին տեղ տեղ կորստուած են գրութեան վերի տողերը: — ԳԻԻ՝ բարբեր, խոշոր, ոչ միօրինակ մինչեւ վերջ: — ՍԿՁԲԱԳԻԻԲ՝ կարմիր մեղմով, սովորական: — ՉԱՐԳԱԳԻԻԲ, ՉԱՐԳԱՆԿԱՐԻ, ԵԿԱՐԻ Եւրոպ. չունի: — ԳԱՏԱՐԻ՝ բգ. 1բ, 48բ, 207: — ԺԱՄԱՆԱԿ՝ ամուր, իբր ժե—ժԶ. դար: — ՏԵՎ.Ի՝ անմագօր: —

Գրիշ՝ Ներս(է՞ս), ըստ նոր յիշատակագրութեան մը՝ Ստեփաննոս վարդապետ (հմտ. քղ. 1ա)։ — ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ գլխաւորը կը պակսի, մանր՝ քղ. 147բ. նորք՝ քղ. 1ա եւ 135բ. — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ Պլովդիւի Ս. Գեորգ եկեղեցւոյ։

Մատենան է Մաշտոց։ Կը բովանդակէ։

Թղ. 2ա (սկիզբէն պակասաւոր). «... Եւ տեանադրեն զղին ամենայն քահանայքն։ Եւ բառնան քահանայքն եւ տանին ի դուռն սրահն եկեղեցոյն, եւ ասն կցորդ ասագին անջատում, բայց ի ճանապարհ պատեհաւոր...»։ Կը յաջորդեն՝ հատուած մը Մատթէի Աւետարանէն. «Յայնժամ պատասխանի եւ Յիսուս եւ ասէ. «Գոհանամ զքէն հայր, տէր երկնի եւ երկրի...», հատուած մ'ալ Մարկոսէ. «Եւ իբրեւ ընդ երեկս եղեւ...», ընթերցուած յԱռակաց եւայն (Թաղումն քահանայի)։ Թղ. 57բ. Եւ ապա մտանէ եպիսկոպոսն ի գերեզմանն եւ ընթեռնու զմահ երանելոյն Յոհաննու Աւետարանչին։ Էր ընդ եղբարսն երանելին Յովհաննէս մեծաւ ուրախութեամբ...։ Թղ. 69ա. Երկրորդ առաւօտուն զան ի գերեզմանն եւ ասն. Սաղմոս կց։ Ընդ երեկոյս հանդիցեն յալիք բարձր։ Ընթերց. ի ծննդոց։ Եւ մնաց Յակոբ միայն. եւ մարտեաւ այր մի...։ Թղ. 89բ. Սրբոյն Թաղէոսի առաքելո ստացեալ յաղագս հոգւոցն հանգուցելոց...։ Արդ հոգիք ամենայն մարդկան...։ Թղ. 90բ. Գրիգորի աստուածաբանի ի բանն որ ի մահն Մաքսիմիանոսի ուսումնակցին իւրոյ։ Ով եղբայր սիրելի...։ Թղ. 94բ. Ութերորդ աւուրն. Ազաւթք զոր ասացեալ է Ստեփաննոս վարդապետի...։ Թղ. 103ա. Կանոնն մկրտութեան յորժամ քրիստոնեա անեն, նախ չէ պարտ յեկեղեցի թողուլ, այլ ձեռնադրել յառաջ երեք շաբաթուր...։ Տէր Աստուած մեր, Աստուած բարերար...։ Թղ. 113ա. Կանոնն պսակ աւրհնելո, նախ ասի ժամամուտ։ Ուրախ լիւր եւ ցնծա...։ Թղ. 112բ. Կանոն հաղորդ տալոյ հիւանդի, անու թահանան զիրկական խորհուրդն...։ Տէր Աստուած ամենակալ...։ Թղ. 122ա. Կանոնն տղա թաղելո. երթան քահանայք եւ ասն Սաղմոս ԻԳ. ...։ Ահաւասիկ տէր Աստուած մեր յոր յուսացեալ էաք...։ Թղ. 129ա. Կանոնն զամենայն վախճանեալս ի հանգիստն յուղարկել...։ Աստուած յաւիտենական անսկիզբն...։ Թղ. 133բ. Եթէ ի մանկանց եկեղեցւոյ է, կամ ի զպրաց...։ Ոչ կամիմ եղբարք...։ Թղ. 147բ. Կանոն ողջհանդիստ աննելո. ասն

Սաղմոս...։ Պատուեա զտէր ի քոց արդար վաստակոց...։ Թղ. 151ա. Կանոն տեառնահանի. ամեն զնուիրեալն ի դուռն եկեղեցւոյն...։ Եւ կոչեաց տէր զՄովսէս...։ Թղ. 156ա. Կանոնն ջուր աւրհնելո. երթան յալին գետոյն խաչիւ եւ աւետարանաւ...։ Եւ ասն արք քաղաքին ցեղիսէէ...։ Թղ. 168ա. Քարոզ պատուիրանի զոր քահանան զեկուցանէ ժողովրդեանն...։ Լուարուք ինձ որդեակք իմ...։ Թղ. 173ա. (Սկիզբը քանի մը սող անընթեռնի...) ...Սուրբն հայրապետաց Գրիգորիոս վկայասէր...։ Եւ եւս զոհութիւն եւ երկրպագութիւն մատուցուր...։ Թղ. 175ա. Յետ այսորիկ արկանն զջուրն ի կոնքն...։ Սաւեսեցաւ Տէր ընդ Մովսեսի...։ Թղ. 182բ. Կանոն խաչ աւրհնելոյ. բերեն յեկեղեցին լուանան նախ ջրով ապա զինով...։ Երանեալ է այր որ...։ Թղ. 198ա. ...սպաս աւրհնել։ Տանին յեկեղեցին առաջի բեմին...։ Աստուած բարձրեալ որ զկեցուցեր զեկեղեցի...։ Թղ. 198բ. Կանոն սկիհ եւ մաղղմայ աւրհնել...։ Աւրհնեալ եւ Տէր Աստուած մեր...։ Թղ. 199ա. Կանոն նոր դուռն եկեղեցւոյ...։ Աստուած նորոգիչ եւ զարդարիչ քո արարածոց...։ Թղ. 200ա. Կանոն ապաշխարող աւրհնել, այսպէս է կարգն։

Ատոնցմէ զատ կան նաեւ «ընթերցում»ներ եւ ապա Մահի Մարգարէից. Թղ. 6ա. Մահ Յովելեա մարգարէի։ Յովէլ էր։ Թղ. 6ա. Մահ Արդիու մարգարէի։ Թղ. 10բ. Մահ Նաւուամ մարգարէի։ Թղ. 11ա. Մահ Ամբակումայ մարգարէի։ Թղ. 12բ. Մահ Սոփոնիա մարգարէի։ Թղ. 18ա. Մահ Անդէի մարգարէի։ Թղ. 18բ. Մահ Չաքարիա մարգարէի։ Թղ. 19բ. Մահ Նոի նահապետին։ Թղ. 20ա. Մահ Եսայեայ մարգարէի։ Թղ. 20ա. Մահ Երեմեայ մարգարէի։ Թղ. 22ա. Մահ Գանիէլի մարգարէի։ Թղ. 23ա. Մահ Չաքարիա մարգարէի հաւրն Յոհաննու։ Թղ. 23բ. Մահ Ապիայ մարգարէի։ Ապա՝ Մահ Մաղաքիա մարգարէի։

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 1. Թղ. 147բ (բուն գրչէն). Չաքարիա մարգարէի գրոցս գնեքս(է՞ս. ջնջում) յեղի ի Տէր աղաչեմ։

2. Թղ. 1ա (տարբեր գրչէ). Այս Մաշտոցս Ստեփաննոս ամինամարուր վրդապետ որ որդի է Տէր Յուսիկ քահանային ինքն իւր ձեռամբն է գրեալ զայս Մաշտոցս, որ յառաջին կազմութիւն հնացեալ զօլով, մեք այժմս նորոգել տուաք ի փառս Աստուծոյ, եւ ի պա-

տիւ Տեառն Ստեփաննոս գերասուրբ վարդապետին, քանզի հին թղթոջն գրեալ տեսար այսինքն զայս Մաշտոցս իւշ Գիլիսէու Հրաշագարդ Սուրբ վանիցն Առաջնորդ Տեառն Մկրտիչ Արքիպս.ի եղբայր Ծոօօթցի Տէր Յօհաննէս Քահանային յիշատակն էր, վասն այսորիկ հարկ յանձին կալաք զայս նորոգեցուցանել, վասն զի զարմիս յիշատակն եւ այսպիսի սքանչելագործ Սուրբ Տառս չի կորնչեցի որ հաղուագիւտ է ի մէջ ազգիս Հայոց՝ ուրեմն եւ Չաքարիա անարժանս ի կրօնաւորաց հայցեմ յարգանք ընթեռնուլ եւ վայելել զայս եւ միով հայր մերիւ յեղի զմեզ, որ եւ յիշողք յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ. ամէն։ Յիշատակ է Յելպէու Սուրբ Գեորգ եկեղեցւոյս ի ՌՄՃԸ (= 1809) թուին նորոգեցաւ, արդեամբ Չաքարիայ անարժան վարդապետիս։

3. Թղ. 135բ. (տարբեր գրչէ). Մեղուցեալ անարժան Գրիգոր Եպիսկոպոս յիշեցէք ի յաղօթս ձեր եւ մեղաց թողութիւն խնդրեցէք, որդնեցի (?) զհայր Մաշտոցս, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց. Քրիստոս Աստուած ձեզ եւ մեզ ողորմեսցի։

36.

Ք Ե Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Պ Լ Ո Վ Դ Ի Ի

ԹՈՒՂԹՔ՝ այժմ 185: — ՄԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 11 X 8 1/2 X 2 1/2: — ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ միասին՝ 8 1/2 X 5: — ՏՈՂՔ՝ 16—17: — ՆԻԻԹ՝ բուրձ բարակ, յղկում: — ԿԱԶՄ՝ խաւաքարեայ, կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ գէշ չէ. ունի սակայն պակասներ: — ԳԻՐ՝ նոտարգիր: — ՄԵԼԱՆ՝ սև: — ՍԿԶՐՆԱՌՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ընդհանրապէս կարմիր մելանով: — ԶԱՐԳԱԳԻՐՔ, ԶԱՐԳԱՆԿԱՐՔ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՔ եւայլն՝ չունի: — Թղ. 116բ եւ 120բ կամ զոյգ մը աղիւսակա՞ն եկարիկներ՝ իբր բացատրողակամ: — ԳԱՏԱՐԿ՝ քղ. 182բ, 183: — ԺԱՄԱՆԱԿ՝ անյայտ, իբր. ԺԸ. — ԺԹ. զար: — ԳՐԻՉ եւ ՏԵՂԻ՝ անմանօր: — ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ չունի: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ Տիար Տիգրան Մարտիրոսեանի Պլովդիւ:

Մատենան է Քերականութիւն Հայերէն լեզուի, տեսակ մը հաւաքածոյ քերականական, ուղղախօսական, հոնտորական եւ փելետոփայական զիտելիքներու: Կը բաղկանայ երեք մասերէ, իւրաքանչիւրը առանձին թուագրեալ էջերով, որոնց երեքին ալ սկզբնաւորութեանց թղթերը կը պակսին մատենանէս:

Ա. Մաս:

Թղ. 1ա. «Հարցմունք եւ պատասխանէք զքերականութեանէ եւ զմասանց նորին, զորս սերտողարար ի միտ անուլ պարտին աշակերտքն յայսմիկ վայրի: Յաղագս մասանց քերականութեան: Գլուխ Առաջին: Հարցումն. Զի՞նչ է քերականութիւն: Պատասխան. է արհեստ ուղղապէս խօսելոյ եւ անսխալարար շարադրելոյ...» են:

Բ. Մաս:

1. Թղ. 39ա. (Սկզբնաւորութեանը թղթերը՝ էջ 1—47 ինկած ըլլալով կը սկսի էջ 55ն). «Հարցումն. թէ՛ զինչ իցէ բարուք ասելն: Պատասխան. է՛ այն, որ զարդարեալ պերճացուցանէ զբանս եւ զճառս իւր զեղեցկախօսութեամբ եւ յարմար պատճառանօք բանականօրէն խօսելով...»:

2. Թղ. 43ա. «Յաղագս մասանց հոնտորութեան ի մասնաւորի: Հրց. Քանի՞ք եւ ո՞ք իցեն մասունք հոնտորութեան ի մասնաւորի: Պաս. Են հինգ եւ են սորա. գտումն, արամազրութիւն, ճոխարանութիւն, յիշողութիւն եւ արտարբութիւն» են:

Գ. Մաս:

1. Թղ. 75ա. (Սկզբնաւորութեան 1—2 էջերը կը պակսին, կը սկսի զատէն թուագրեալ էջ 35ն). «... Հաճոյ է աստ կարճատօտարար ցուցանել զհասակաւորութիւնն, զոր փիլիսոփայութիւնն շնորհէ, եւ տայ մարդոյ: Աներկբայապէս ճշմարիտ փիլիսոփայութիւնն շահակապառնեղ մարդոյ: Նախ ասեմ թէ իցէ շահակապառնեղ մարդոյ ըստ որում է՛ մարդ, քանզի մարդն ունի զիմացողութիւն...»:

2. Թղ. 87ա. «Պրակ Երկրորդ: Թէ զինչ իցէ՛ ենթադրութիւն: Ենթադրութիւն է զրութիւն ձայնի՛ ի տեղուջ յղացման իրի առ ի բացայայտելոյ զինքն յղացումն եւ զիրն...» են:

Մն. Թղ. 184—185. Կայ ոտանաւոր ուղերձ մ'առ Ս. Աստուածածին. «Երգ առ Սրբուհի Կոյսն Մարիամ ցաւալեալ վասն շարժարանաց միածնի որդւոյ իւրոյ: Կայր առ խաչին մայր ցաւալին, արտասուալից եւ արտաճալին...»:

ՅԱՒԵԼՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ԶԵՌԱԳԻՐՆԵՐ)

37.

ՏՈՍԱՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ

ԹՈՒՂԹՔ՝ 50: — ՄԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ 21 1/2 X 11 X 1: — ԿԱԶՄ՝ կաշեպ հին եւ փայտալուծ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ միջակ: — ՆԻՒԹ՝ բուրդ սովորական, գորշաբակ: — ՏՈՂՔ՝ պլակամ: — ԳԻՐ՝ նուրբ: — ԳԱՏԱՐԿ՝ բաւական էջեր մէջընդմէջ: — ԺԱՄԱՆԱԿ՝ սկզբնաւորութիւն 1812 տարիէն, կը շարունակուի մինչեւ մեր օրեր: — ՏԵՂԻ՝ Պլովդիւ: — ԳՐԻՉ՝ սկզբնական՝ Յովհաննէս Ամբակումբ: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Պ. Մարտիկ Մեղրոնեանի ի Պլովդիւ, որ գայն ստացած է իր նախնիներէն:

Մատենան է Ընտանեկան Տաւար մը, ուր 1812 տարիէն սկսեալ արձանագրուած են Ամբակումբեան զերդաստանի եւ յաջորդաց ծնունդներն ու մահերը, ընտանեկան կարեւոր զէպքերն, հաշիւներ եւ այլն:

Թղ. 34ր—35ա. Ինքնակենսագրութիւն Գրեգորիս Արքեպ. Յովհաննէսեանի (1827—1916) գրուած 1889ին գրաւար՝ իր իսկ ձեռքով: Կան կենսագր. լրացուցիչ տեղեկութիւններ նոյնի մասին նաեւ թղ. 39ա եւ 33բ:

38.

ՀԱՒԱՔԱՅԻՆ

ԹՈՒՂԹՔ՝ 58: — ՄԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ 18 X 12 X 1: — ԿԱԶՄ՝ հին կաշեպատ, ամուր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ՆԻՒԹ՝ բուրդ սովորական: — ՏՈՂՔ՝ խառն: — ԳԻՐ՝ նուրբ: — ԳԱՏԱՐԿ՝ բոլոր ի էջերը: — ՍԿԶԻՆՄԻՐՔ՝ գարդազիր կարմիր մեյլանով: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1824—1825: — ՏԵՂԻ՝ հաւանաբար Կ. Պոլիս: — ԳՐԻՉ՝ Բեմպէ նազիֆ Օհաննէսեան, դուստր Միս. Օհաննէս աղայի: — ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ՝ Մատենան տեսած էմ Տ. Աքանաս Ա. Բեյ. Այվազեանի մօտ ի Ասփիս:

Մատենան է Հաւաքածոյ բանաստեղծութեանց, հայրենասիրական երգերու եւ զանազան նամակագրութեանց:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. (կարեւորը) Թղ. 10ա. «Պատճառ ձեռագրոցս իմոյ այս է որ ի թուոյն Հայոց ՌՄՂԴ (==1825) մարտի 17ին. որ ես Միսոսի Օհաննէս Աղայի դուստր Բեմպէ նազիֆս ուսաց զայս զերս իմ հարսպատ վարժապետէս, վասն որոյ. Աստուած կեանք տացէ եւ մանաւանդ ինձ պատճառ եղելոյ առ այսպիսի գործ կրթելոյ՝ պատուական հօրս Աստուած ինքն վարձատրեցէ որում վայելէ փառք... նուազ աղախին Բեմպէ նազիֆ»:

39.

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԹՈՒՂԹՔ՝ 138: — ՄԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ 23 X 15 X 1 1/2: — ԿԱԶՄ՝ խաւաքարեպ կիսակաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ՆԻՒԹ՝ բուրդ սովորական: — ՏՈՂՔ՝ 21: — ԳԱՏԱՐԿ՝ բղ. 1, 2բ, 3բ, 4բ, 5բ, 6բ, 7, 8, 17բ եւ 52բ էն անդին, գործս ըլլալով կիսատ: — ԳԻՐ՝ շղագիր: — ԳՐԻՉ՝ հաւանաբար Նշան Մ. Շիշմանեան: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1863: — ՏԵՂԻ՝ Ֆիլիպէ (= Պլովդիւ): — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Պլովդիւի «Գրասիրաց եղբայրութեան» Մատենադարանին, թիւ ցուցակի՝ 2127:

Մատենան է «Ճարտասանութիւն համառօտ արարեալ ի Նշան Մ. Շիշմանեանէ, ի Ֆիլիպէ, 1863 Յունվ. 1»: Կը սկսի թղ. 9ա էն եւ կը շարունակուի մինչեւ թղ. 52ա, շարունակութիւնը կը պակսի. կիսաւարտ:

Թղ. 2ա. «Առ աղնիւ եւ ուսումնասէր աշակերտն իւր Մկրտիչ Փ. Կարապետեան նուիրէ ի շնորհս ուսման երախայրեաց Նշան Մ. Շիշմանեանց»:

40.

ՇԱՀ ԻՍՄԱՅԻԼ

Եջ 393: — ԳԻՐ՝ նուրբ գրքեր: — ԿԱԶՄ՝ կաշեպ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժ. դար հաւանաբար: — ԳՐԻՉ ՆԻ ՏԵՂԻ՝ անձանօր: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Պ. Երուանդ Քրքիէսէլեանի ի Պլովդիւ:

Մատենան է «Շահ Իսմայէլ ի Կիւլիզար. Զէյճան էսման... Հէյղա Բիթապի տէրտիմէնտ աշրքլարըն»: Հայաստան թրքերէն:

41.

ՏԵՏՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

46 X 30 սմ. մեծութեամբ լայնածաւալ տոմար մը: — ԳԻՐ՝ շղագիր պարզ: — ԵՌՐԱԳԻՐՔ՝ երկաթագիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժ. դար: — ՏԵՂԻ՝ Բուրգազ: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Բուրգազի Ս. Խաչ եկեղեցւոյն:

Այս Տետրի վերջին էջերուն վրայ գրուած է. 1. Տեղեկութիւններ Պուրկազի անցեալէն ու ներկայէն. Այտոս. Պուրկազի եւ Այտոսի գերեզմանաքարերուն արձանագրութիւնները, որոնք անազարտ մնացած են մինչեւ ներկայ թուականը. 20 Յուլիս 1901 թ. Քրիստոսէ (Հաւաքեց եւ գրեց Մ. Քէնտիկեան, ուսուցիչ Ազգ. Վարժարանի): Ա. Այտոս (Հմմտ. «Այտոս, անհետացած հայ գաղթականութիւն մը», Բիւզանդիոն, Գ. տարի, թ. 1189, 2 Սեպտ. 1900): — Բ. Պուրկազ.

Պուրկազի եկեղեցւոյ դաւիթին մէջ գտնուող զերեզմանաքարերուն արձանագրութիւնները (Հաւաքեց եւ գրեց Մ. Քէնտիկեան ուսուցիչ Ազգ. Վարժարանի, 20 Յուլիս 1901 թ. Քրիստոս): (Հմմտ. Բիւզանդիոն, Ե. տարի, թ. 1466/1467, 25/26 Յուլիս 1901):

2. Պուրկազի Ս. Խաչ եկեղեցին, իր հին վիճակը, անունը եւ առաջնորդները (գրուած նոյնպէս Մ. Քէնտիկեանէ):

42.

ՏԵՏՐ ՅՈՒՅԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

Եջ. 296 2: — ՄԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ 31, 50 X 22 X 2: — ՏՈՂՔ՝ 33: — ԿԱԶՄ՝ նոր կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ: Կը պահպանուի մասնաւոր տուփի մէջ: — ԳԻՐ՝ շղագիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1917: — ՏԵՂԻ՝ Պլովդիւ: — ԳՐԻՉ՝ Թ. Գ. 2. (= Թագուր Գ. Հինտիեան): — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Պլովդիւի Ս. Գեորգ եկեղեցւոյն:

Մատենան է «Տետր Յուցակագրութեան Ս. Գեորգ եկեղեցւոյ Ֆիլիպէի» որ է «ընդհանուր Յուցակագրութիւն Ս. Գեորգ եկեղեցւոյ անշարժ Կալուածոց, սրբազան անօթից եւ զանազան զոյրց: Գրեցաւ ի ժամանակի Ազգ. առժամեայ Երուանդ Յանձնախմբի, Ատենապետ Յովհաննէս Գանձարեանի, Ատենաղայր՝ Պետրոս Տերեանի, Գանձապետ՝ Թագուր Գ. Հինտիեանի, Չեռամբ վերջնոյն եւ օժանդակութեամբ Գարտուղար Յարութիւն Սուրեանի, 1917ին»:

Եջ 1—13. «Փոխան Յառաջարանի»: — Եջ 15. «Ընդհ. Յուցակագրութիւն»: Ընդարձակօրէն կը խօսի անշարժ կալուածոց, անօթներու եւ զոյրցերու մասին:

Եջ 183—195. «Ծագումն Հայկական խրեդոնց» հեղինակ՝ Գեորգ Չ. վրդ. Ռուսնուֆելեան (Հմմտ. «Թագմիկ» Ֆիլիպէ, թիւ 152—153, 19 եւ 23 Մայիս 1907):

Եջ 196—232. «Ա. Պալայ Առաջնորդ Գեորգ Չ. վրդ. Ռուսնուֆելեանի եւ Պատրիարք Ներսէս Արք.ի (Վարժապետեան) միջեւ փոխանակուած քղբակցութիւններու եւ այլ գրութիւններու արտագրութիւններ՝ Հայկ. խնդրոյ մասին»:

43.

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՅՈՎԱԿԻՄ ՊԱՏՐԻԱՐԳԻ

Հաստ եւ ուղղակի քղբէ գալար. ՄԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ 1 մեթր 42 սմ. երկայն եւ 46 սմ. լայն. գրութիւնը միասին՝ 87 սմ. երկայն եւ 36 սմ. լայն: — ՏՈՂՔ՝

95, գրուած մեծ եւ գեղեցիկ նուրբգրով. ամբողջ գրութիւնն անուած կարմիր լուսանցագծերու մէջ: Ճակատը բազմազոյն եւ ոսկեգրուած խոշոր խորան մը (վերի մասն վնասուած՝ պատած ըլլալուն), վերը՝ երկզոյն վարդագիր «է», տակը՝ յաշիւութիւն, անկի վար՝ գոյգ մը գեղանկար երեշտակներ՝ ոսկեգրուած բարակ մը (արեւածե) բռնած, մէջտեղը կարմրադրոշմ պատրիարքական կնիք: Սկիզբն բազմազոյն եւ գեղեցիկ բազմազոյն մը «է», անաջին տողն նոյնպէս բազմազոյն եւ ոսկուով բազմազոյն: Նկարք եւ գարդազիրք՝ շատ սիրուն:

Գիր Օրինութեան եւ Հրաւիրական, սիրոյ եւ ողջունի եւ աղերսանաց Յովակիմ Պատրիարքի Երուսաղէմի, գրուած ՌՄՂԶ (=1787) թուին: Սկիզբն է. «Ի սուրբ եւ փառաւորեալ... մեծի Մայրաքաղաքէս Երուսաղէմի...: Եւ ի սոցին անարժան սպասաւոր ի Տէր Յովակիմ մեղսապարտ վարդապետէ եւ Պատրիարքէ Սրբոյ քաղաքիս Երուսաղէմի...: Որպէս որ ամենայն տարի նոր ի նորոյ զգալիս սրբոյ Աստուածաղբի զերազան Աթոռոյս՝ հոգւոյ տանն ձերոյ, առատապէս կու լցուցանէք եւ կու հոգայք, հոգացէք յայտմ ամի եւս զամենայն պիտոյս սորա, յիշատակօք եւ առատ ողորմութեամբ... եւ այլն: Այլ եւս խնդրեմ ի ձէնջ աղերսիւ, զի հոգեւոր սիրելոյն իմոյ սուրբ Երուսաղէմի վէջիլ յոզնիմաստ Յարութիւն Աստուածարան վարդապետին աշխատաւորի սրբոյ Աթոռոյս, թեւ եւ թիկունք լինիք եւ լաւապէս տիրութիւն աննէք...»:

Վերջը՝ «Գրեցաւ օրհնութեան եւ հրաւիրական, սիրոյ եւ ողջունի եւ աղերսանաց գիրս, ի վայելչագարդ մայրաքաղաքս սուրբ Երուսաղէմ, ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ տիեզերածագ սրբոյ եւ մեծի զերազան Աստուածաղբի Աթոռոյս ամենայն Հայոց, ի թուին ԳՄՂԶ (=1787), յամսեանն մարտի 15 (=27)ին»:

Ծան. Չեռագիրս սեփականութիւնն է այժմ Պ. Գեորգ Պալըզեանի ի Պլովդիւ:

44.

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԹԵՌՈՐՈՐՈՍ ՊԱՏՐԻԱՐԳԻ

Հաստ եւ ուղղակի քղբէ գալար. ՄԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ 72 X 47 սմ., միասին: — ՏՈՂՔ՝ 63: — ԳԻՐ՝ մեծ եւ ընտիր նուրբգիր: Ճակատը՝ գարդազիր (բազմազոյն) «է», տակը՝ մեծ կնիք պատրիարքական: Սկիզբն բազմազոյն բազմազոյն մը «է», բաւական սիրուն: Մեծ մասն բառակիրներու՝ կարմիր մեյլանով:

Գիր Օրինութեան եւ Շնորհակալութեան, գրուած ՌՄՄԷ (=1808) թուին՝ Երուսա-

դէմի Թէոդորոս Պատրիարքի կողմէ առ Շու-  
մէնցիս: Սկիզբն է՝ «Ի սուրբ եւ փառաւո-  
րեալ...»: Իր օրհնութեանց շարքին կը լինէ  
Շումէնի մէջ «Սրբոյ Տանն երախտաւոր,  
բազմաշխատ եւ հաւատարիմ զանձապետ սի-  
րելոյն մերում յԱստուծոյ օրհնեալ Մուրատ  
բարեպաշտի...»: Ապա խօսելով Երուսա-  
ղէմի զանձանակի արդիւնաւորման մասին՝  
կը շարունակէ. «... եւ ահա յայսմ ամի բստ  
հանապաղորդական բարի սոխորութեան ձե-  
րում զբոլոր տար(ւ)ոյ նուէրս եւ զընծայս  
զանձանակի ողորմութեանց ձերոց՝ հաւա-  
քեալ ի մի առաքեալ էիք հարիւր եւ քառա-  
սուն զուշ ձեռամբ զանձապետ Մուրատ բա-  
րիսիրիզ եւ Սուրբ Երուսաղէմի ծայրագոյն  
նուիրակի Կարապետ Եպիսկոպոսին...»:

Վերջը՝ «Գրեցաւ Օրհնութեան եւ Շնոր-  
հակալութեան գիրս ի վայելչադարզ մայրա-  
քաղաքս Սուրբ Երուսաղէմ, ընդ հովանեաւ  
Սրբոց Յակոբեանց տիեզերափայլ Աթոռոյս  
ամենայն Հայոց: Ի թուին ՌՄՃԷ (= 1880)  
Ապրիլի հնգին»:

Ծան. Չեռապիրս այժմ սեփականութիւնն  
է Պ. Օննիկ Յովակիմեանի ի Շումէն:

45.

ԳԻՐ ՍԻՐՈՅ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԴԱՆԻԷԼ  
ՊԱՏՐԻԱՐԳԻ

Բարակ եւ ողորմ բուրբ, երկծալ. Մեծնիթիւն՝  
47 X 35 սմ. ամբողջ. իւրաքանչիւր ծալք (ԹՈՒՂԹ)՝  
35 X 23½ սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆԸ՝ միասին՝ 21 X  
17½ սմ.: — ՏՈՂՔ՝ 32. գրուած ընտիր օտարգրով:  
ձակաղը՝ կնիք պատրիարքական բոլորածն, մէջտեղը  
Յս. Քս. գրերն ու նկարը. եզերքը՝ «Քս.ի ծառայ Դա-  
նիէլ վրդպտ. Պատրիարք Կոս. ՌՄԵԸ»:

Գիր Սիրոյ եւ Օրհնութեան Դանիէլ Պատ-  
րիարքի Կ. Պոլսոյ, զրուած ՌՄԵԸ (= 1799)  
թուին ի Կ. Պոլիս: Սկիզբն է. «Յիսուսի  
Քրիստոսի ծառայ Տէր Դանիէլ Արքեպիսկոպոս  
եւ շնորհիւ Սրբոյ հոգւոյն պատրիարք մեծի  
մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսոյ. Յորմէ  
ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նա-  
մակ պահպանութեան. հնաւանդ... սիրե-  
լեացդ իմոց՝ մաքրասուն Տէր Մարտիրոս եւ  
Տէր Մարկոս քահանայից եւ բարեպաշտն  
խօսայ Մելքոն Աղայիզ... ծանուցումն լիցի  
սիրելեացդ իմոց...»:

Վերջը՝ «Գրեցաւ սիրոյ եւ օրհնութեան  
նամակս ի ՌՄԵԸ (= 1799) ի հոկտեմբեր Իին  
ի Պատրիարքարանս Հայոց ի մեծն Պոլիս ընդ

հովանեաւ հրեշտակապարտ Սուրբ Աստու-  
ծածին Եկեղեցւոյ»:

Կողքին՝ նոյն գրով՝ «Հասցէ թուղթս ի  
Եաշ, ի ձեռս Տէր Մարկոս Աւաղ Քահանային  
եւ Տէր Մարտիրոսին եւ Մելքոն Աղային՝ բա-  
րեալ»:

Սեփականութիւն՝ անձնականիս:

(Վերջ:) Ե. ԳԱՍԱՊԵԱՆ

ՀԻՆ ՀՇՅՈՒՄՆԻ ԱՐԵՒՄՏԵՆ ՍՇՀՄԵՆԸ  
ՓՈՔՐ-ՀՇՅՔ ԵՒ ԿՈՂՈՓԵՆԷ (ՍԵՐԸՍԻՆ)

ԳՐԵՅ Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

(Շարունակութիւն:)

Այս էր իրաց վիճակը, երբ արեւելք մեծ  
փոփոխութիւն մը կրեց՝ Սասանեանց յառնե-  
լով (224ի եւ 227ի ձակատները) եւ Պար-  
թեաց անկմամբ՝ սասանեան Պարսից զէմ  
էին որ պիտի կուտէին այնուհետեւ Հռոմայե-  
ցիք, որոնք նպատակ ունէին այնուհետեւ  
պահել միայն իրենց շահածը: Բաւական միջին  
են նաեւ այս ատեն Հայոց իրերը, թէեւ մեր  
զրահանութիւնէն ունինք Աղաթանգեղոսը՝  
որուն պատմական մասը թէեւ յէականս ճիշդ  
է, շատ թարմատար է ուրիշ կողմանէ<sup>14</sup>:  
Այս տեղ կ'ուրուագծենք միայն՝ աւելի պար-  
զելու համար Գ. դարու վերջին կէտերը՝  
որոնք նշանակալից եղան նաեւ Փոքր-Հայոց  
համար:

Արտաշիւր՝ հազիւ յաղթած Արտաւանայ  
եւ հիմնած Սասանեանց հարստութիւնը,  
կ'արշաւէ Մարաստան եւ անկէ Հայաստան՝  
ուր փախած էին Արտաւանայ որդիք եւ Պար-  
թեաց շատերը: Թէեւ կը յաղթուի (229ին),  
Պարսիկը՝ որոնք առաջին օրէն կը պահան-  
ջէին Միջագետքն ու Հայաստանը, եւ իրենք  
զիրենք հին Աքամենեանց յաջորդ կ'ուղէին  
ցուցընել, եւ համեմատութեամբ Պարթեաց՝  
շատ ազգայնամոլ ու կրօնամոլ էին, կ'աւերեն  
Միջագետքը: Աղեքսանդր Սելեւքոսի արշա-  
ւանքն ալ (230—234 տարիները) մեծ օգուտ  
չունեցաւ, թէեւ կ'ըսուի երեք թեւով մտաւ  
Հայաստան, Միջագետք եւ Պարսկաստան,  
որչափ ալ ետ առած կ'ըսուի (ըստ ոմանց

<sup>14</sup> Ուրիշ տեղ քննութեան առած ենք պատմու-  
թեան այս շրջանը (Աղաթ., Վիեննա 1891):

միայն) Հեղիագարազու Պարթեաց թողու-  
ցած Միջագետաց մասերը: Աւելի յաջող էր  
Գորդիանոս կայսեր արշաւանքը (238—244)  
ընդդէմ Շապուհ Ա. (241—272), որ ետ առաւ  
Շապուհ զրուած Մծրինն ու Խառանը, եւ Մի-  
ջագետաց Արորայի քով Շապուհ շարաշար  
պարտուելով փախաւ: Սակայն արդիւնքն այն  
եղաւ որ Գորդիանոս սպաննուեցաւ Փիլիպ-  
պոս Արարացիէն (244ին), եւ այս վերջինս  
ամօթալի խաղաղութիւն մը գնեց՝ Շապուհ  
թողով Միջագետքն, եւ Հայաստան ալ ա-  
զատ՝ Շապուհ յարձակման դէմ: Հետեւու-  
թիւնն եղաւ Խոսրովայ Հայոց արքայի սպա-  
նութիւնը (248էն ետքը), Հայաստանի գրա-  
ւումը եւ մանուկ Տրդատայ (Գ.) մերժուելը՝  
որ սպաստանեցաւ Հռոմոց (253ին): Եւ  
Հայոց գահը հանուեցաւ Արտաւազը մը Պար-  
սից կողմէ: Միջագետք առնուեցաւ (միայն  
Ուռնայ դիմադրեց), եւ արշաւանքը շա-  
րունակուեցաւ մինչեւ Անտիոք՝ որ այրա-  
ցաւ եղաւ (258ին), ապա Կիլիկիա եւ Գա-  
միրք: Սասանեանց այս եւ նաեւ յաջորդ ար-  
շաւանքները միշտ աւերմանց եւ աւարտու-  
թեանց արշաւանքներ էին՝ քիչ կամ շատ:  
Վաղերիս կայսրը՝ Անտիոքայ առմանէն  
ետքը հասած, լիակատար ձախողութիւն  
մ'ունեցաւ՝ Միջագետաց մէջ մեծ պարտու-  
թիւն մը կրելով եւ Պարսից այն անլուր յա-  
ջողութիւնն ընծայելով՝ կայսր մը գերի  
րոնելու (260ին, մեծ անդթութեամբ վա-  
րուեցան Պարսք Վաղերիանու հետ, † 269):  
Բարբարաթութիւն մըն էր որ Հռոմայեցւոց  
իրերուն բոլորովին վատթարելուն առջեւը  
երցաւ առնուլ՝ Պագմիւրայի արարացի արքայ  
մը՝ Ոտենագոս, որ յաջողեցաւ Եփրատեսիոյ  
մէջ խորտակել Շապուհ բանակը, առնուլ  
Մծրինն ու Խառանը եւ նոյն իսկ Տիգրոն պա-  
շարել (261ին), եւ ասով հոչակեցաւ կայսր  
(264ին), բայց մեռաւ Գթաց զէմ մղած պա-  
տերազմին մէջ (267ին)՝ որոնք ողորմած էին  
Փոքր Ասիան՝ մինչեւ Գամրաց աշխարհն ալ:  
Սակայն այս արդիւնալից անձին կ'սոջ՝ Ձենո-  
րիա գլխոյի, որուն կողմն էին Հայք, զէմ  
պատերազմեցաւ Աւրեղիանոս եւ Ձենորիա  
գերի բռնուեցաւ (273ին) եւ հրաշալին Պալ-  
միրա քարուքանդ եղաւ: Չարմանալի են  
այնուհետեւ ալ այլեւայլ կայսերաց արշա-  
ւանքները, որոնք միակերպ վախճան մը  
կ'ունենան: Պրոքոս՝ Վաւապ Բ. արքայի  
հետ դաշնադրութիւն մը կնքելէ ետքը  
(279ին)՝ պատրաստութիւն կը տեսնէ արշա-

ւանքի մը բայց կը սպաննուի (281ին) Կա-  
րոս կը մղէ նոյն արշաւանքը: Միջագետք  
կը մտնէ, նաեւ Տիգրոն՝ կ'ըսուի՝ կը հասնի,  
բայց հոն կը մեռնի (284ին): Որդին՝ Նու-  
մերիանոս՝ բանակն ետ դարձուցած ատեն  
կը սպաննուի (նոյն տարին): Իրապէս յա-  
ջողութիւն ունեցաւ միայն Գիոկղետիանոս,  
որ կայսր ըլլալէն ետքը (284) եւ Կարի-  
նոսի յաղթելէն ետքը (285)՝ հարկ տեսաւ  
կարգադրել արեւելից դործերը եւ արշա-  
ւանքի մը ձեռնարկել. բայց Վաւա Բ՝ որ  
խաղաղասէր էր, խաղաղութիւն մը կնքեց  
այնու դաշամբ որ Տիգրիսէն առդին եղած  
երկիրները Հռոմայեցւոց մնան (286ին):  
Տրդատ Գ. Մեծ կրնար (թէեւ երկրորդ ան-  
գամ՝ բայց այս անգամ միայն իրապէս ամ-  
բողջ Հայաստանի վրայ) դահ հանուիլ  
(287ին): Սակայն վերջնական խաղաղու-  
թիւնը միայն տասն տարի ետքն եղաւ: Ներ-  
սեհ (293—302) նորէն ձեռնարկեց աշխար-  
հայութեան եւ զրուեց ալ Հայաստանն ու  
Միջագետք (295ին): Գիոկղետիանոս խա-  
րեց Գաղերիոսը, որ աճապարեց՝ բայց իւր  
անխոհեմութեամբ նախ ծանր պարտութիւն  
մը կրեց (296ին). բայց երբ կրկին զօրաժո-  
ղով եղած՝ մեծ բանակաւ Հայաստան մտաւ,  
այնպիսի կատարեալ յաղթութիւն մը զործեց  
Ներսեհի դէմ, որուն կանայք, բորք եւ որդիք  
զերի ինկան, այնպէս որ Ներսեհ ամենամանր  
պայմաններն ալ յանձն առաւ (297ին), եւ  
այս խաղաղութիւնը տեւեց 40 տարի (մինչեւ  
Շապուհ Բ. Մծրնայ վրայ յարձակիլը՝ 338ին):

Թէ՛ Հայոց եւ թէ՛ Փոքր-Հայոց համար  
այս կարեւոր հաշտութեան կէտերն էին. (ըստ  
Պետր. Պատրիկիոսի, Հտկտ. Գ.) թէ Հռո-  
մայեցւոց կը մնայ Անդեղ-տունը (Ինդիլենէ)  
Ծոփաց հետ, եւ Արգն (Արդանենէ՝ Աղձնիք)  
Կորդուաց եւ Ծաւղէից հետ. եւ Տիգրիս  
սահման է երկու պետութեանց: Հայաս-  
տանի սահմանը կը ձգուի մինչեւ Ծիւնտա  
(Չիւնթա) ամրոցը՝ որ Մարաց սահմանին  
վրայ էր. Վրաց արքայն ալ Հռոմայեցւոցմէ  
առաւ թաղաւորութեան յատուկ նշանակ-  
ները: Մծրին ալ շահաստան ըլլայ Տիգրիսի  
վրայ<sup>15</sup>: Շահը մեծ էր՝ նոյն իսկ խաղաղու-  
թեան տեսականութեամբ, նաեւ Հայոց հա-  
մար, եւ Տրդատ կրնար խաղաղութեամբ թա-  
ղաւորել. Հայոց քրիստոնէութեան դարձը  
տեղի ունեցաւ, եւ երկրին հանդամանքներն

<sup>15</sup> Այսինքն՝ վաճառականական պատ քաղաք.  
ամէն քաղաք վաճառատեղի չէր: